



ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ

ԼՂՀ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ
ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՑԱԼ

ք.Ստեփանակերտ

20 փետրվարի 2015թ.

ԼՂՀ Գերագույն դատարանը կազմով.

նախագահությամբ՝
մասնակցությամբ՝

Ն.Նարիմանյանի
Գ.Արզումանյանի
Ա.Աբրահամյանի
Գ.Գրիգորյանի
Ի.Կարապետյանի
Ա.Հայրապետյանի
Վ.Հովսեփյանի

Քննության առնելով ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարանի
դիմումի ընդունելիության հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց .

Համաձայն ԼՂՀ Սահմանադրության 114-րդ հոդվածի 2-րդ մասի 2.7-րդ կետի՝
ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարանը /դատավոր
Ռ.Ջհանգիրյան/ 2015թ. հունվարի 27-ին դիմել է ԼՂՀ Գերագույն դատարան՝ խնդրելով
<< որոշել <<Դատական ակտերի հարկադիր կատարման մասին>> ԼՂՀ օրենքի 47.1-
րդ հոդվածի 1-ին մասի համապատասխանությունը ԼՂՀ Սահմանադրությանը>>:

Դիմումի նախնական ուսումնասիրությունը ցույց տվեց.

1. ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարանի /այսուհետ՝
Առաջին աստիճանի դատարան կամ Դիմող/ 2014թ. փետրվարի 11-ի վճռով անհատ
ձեռնարկատեր Կարեն Սարգսյանից /այսուհետ՝ նաև Պարտապան/ հօգուտ ԼՂՀ
պետական բյուջեի բռնագանձվել է 4.799.600 /չորս միլիոն յոթ հարյուր իննսունհինը

հազար վեց հարյուր/ ՀՀ դրամ: Կ.Սարգսյանից ԼՂՀ պետական բյուջե է գանձվել նաև 95.992 /իննսունհինգ հազար ինը հարյուր իննսուներկու/ ՀՀ դրամ՝ որպես պետական տուրքից կազմված դատական ծախս: Առաջին աստանի դատարանի վճիռն օրինական ուժի մեջ է մտել 2014թ. մարտի 12-ին, իսկ նույն թվականի մարտի 19-ին դուրս է գրվել կատարողական թերթ:

ԼՂՀ արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության կողմից 2014թ. մարտի 27-ին հարուցվել է թիվ 3-1168/14 կատարողական վարույթը, որով արգելադրվել են Պարտապանին սեփականության իրավունքով պատկանող 2 /երկու/ տրանսպորտային միջոցները:

2014թ. մարտի 27-ին Պարտապանի ներկայացուցիչ Վ. Հայրապետյանը դիմել է Առաջին աստանի դատարան՝ վճռի կատարումը հետաձգելու խնդրանքով:

Առաջին աստանի դատարանի 2014թ. մայիսի 27-ի որոշմամբ դիմումը բավարարվել է, վճռի կատարումը հետաձգվել է մինչև 2015թ. մայիսի 1-ը:

Առաջին աստանի դատարանի վերոնշյալ որոշման դեմ՝ 2014թ. հունիսի 2-ին, ԼՂՀ կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայությունը ներկայացրել է վերաքննիչ բողոք, որի քննության արդյունքներով ԼՂՀ Վերաքննիչ դատարանի 2014թ. հունիսի 19-ի որոշմամբ վերաքննիչ բողոքը մերժվել է և 2014թ. մայիսի 27-ի՝ «Դատական ակտի կատարումը հետաձգելու վերաբերյալ դիմումը քննության առնելու մասին» որոշումը թողնվել է օրինական ուժի մեջ:

Վերաքննիչ դատարանի 2014թ. հունիսի 19-ի որոշման դեմ 2014թ. հոկտեմբերի 21-ին նոր երևան եկած հանգամանքներով վճռաբեկ բողոք է բերել ԼՂՀ կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայությունը :

ԼՂՀ Գերագույն դատարանի 2014թ. նոյեմբերի 18-ի որոշմամբ վճռաբեկ բողոքը բավարարվել է: ԼՂՀ վերաքննիչ դատարանի 2014թ. հունիսի 19-ի որոշումը բեկանվել է և Կարեն Սարգսյանի ներկայացուցիչ Վ.Հայրապետյանի դիմումը մերժվել է:

Պարտապանի կինը՝ Իննա Պետրոսյանը, 2014թ. դեկտեմբերի 8-ին դիմել է Առաջին աստանի դատարան՝ ընդդեմ ԼՂՀ Արդարադատության նախարարության ԴԱՀԿԱ ծառայության, ԼՂՀ կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայության և Կարեն Սարգսյանի՝ ԼՂՀ ԱՆ ԴԱՀԿԱ ծառայության հարկադիր կատարող Վ. Հարությունյանի 2014թ. մարտի 27-ի որոշման հիման վրա արգելադրված գույքը՝ «MERCEDES BENZ» 413 CDI մակնիշի 29 SS 053 պ/հ և «FORD TRANSIT» մակնիշի 99 NN 077 պ/հ ավտոմեքենաներն արգելանքից հանելու պահանջով:

Առաջին աստանի դատարանի 2014թ. դեկտեմբերի 9-ի որոշմամբ /դատավոր Ռ.Ջհանգիրյան/ Իննա Պետրոսյանի հայցադիմումն ընդունվել է վարույթ, հարուցվել ԸԻԴ 2119/02/14թ. քաղաքացիական գործը և այն նշանակվել դատական քննության 2015թ. հունվարի 12-ին:

2. Առաջին աստանի դատարանը գտնելով, որ գործում առկա տրանսպորտային միջոցների առուվաճառքի պայմանագրերի, գրանցման և հաշվառման վկայականների, ամուսնության վկայականի համաձայն՝ տրանսպորտային միջոցները ձեռք են բերվել Կարեն Սարգսյանի և Իննա Պետրոսյանի ամուսնության ընթացքում հատուցելի գործարքով և ամուսինների միջև ամուսնության պայմանագիր չի կնքվել, եզրահանգել է, որ քննարկվող իրավահարաբերության նկատմամբ կիրառման ենթակա օրենքի՝

<<Դատական ակտերի հարկադիր կատարման մասին>> ԼՂՀ օրենքի 47.1-րդ հոդվածի 1-ին մասի դրույթները հակասում են ԼՂՀ Սահմանադրության 33-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջներին՝ ներքոշարադրյալ պատճառաբանությամբ.

ԼՂՀ Սահմանադրության 33-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ սեփականությունից կարող է զրկել միայն դատարանը՝ օրենքով նախատեսված դեպքերում:

Նշված սահմանադրական նորմով ամրագրված է սեփականության իրավունքի անձեռնմխելիության սահմանադրական երաշխիքներից երկուսը. 1-ին՝ անձն իր սեփականությունից կարող է զրկվել բացառապես օրենքով նախատեսված դեպքերում /հիմքերով/, 2-րդ՝ սեփականատիրոջ կամքին հակառակ սեփականության իրավունքը կարող է դադարեցվել միայն դատական կարգով՝ դատարանի որոշմամբ:

Դատական կարգով սեփականությունից զրկելու սահմանադրական պահանջը ենթադրում է, որ անձի սեփականության իրավունքը հարկադրաբար կարող է դադարեցվել քաղաքացիական, վարչական կամ քրեական դատավարության մասին օրենսդրության պահանջների պահպանմամբ իրավասու դատարանի կողմից կայացված և օրինական ուժի մեջ մտած դատական ակտի /վճիռ, դատավճիռ, որոշում/ հիման վրա:

3. Ըստ դիմողի՝ <<Դատական ակտերի հարկադիր կատարման մասին>> ԼՂՀ օրենքի 47.1-րդ հոդվածի 1-ին մասը չի ապահովում բավարար նորմատիվային իրավական նախադրյալներ՝ ԼՂՀ Սահմանադրության 33-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջների իրականացման համար՝ այն իրավական բովանդակության ու նշանակության տեսանկյունից, ինչը դրված է սահմանադրական նորմի հիմքում:

4. Դիմումի և կից ներկայացված ԸԻԴ 2119/02/2014թ. քաղաքացիական գործի նյութերի ուսումնասիրությունը վկայում է, որ <<Դատական ակտերի հարկադիր կատարման մասին>> ԼՂՀ օրենքի 47.1-րդ հոդվածի 1-ին մասի առնչությամբ դիմողը չի ներկայացրել պատշաճ իրավական հիմնավորումներ վիճարկվող դրույթի ենթադրյալ հակասահմանադրականության վերաբերյալ: Մինչդեռ <<Սահմանադրական դատավարության մասին>> ԼՂՀ օրենքի 59-րդ հոդվածի 5-րդ մասը՝ որպես դատարանների դիմումների պարտադիր պայման, սահմանում է, որ դատարանի դիմումում պետք է հիմնավորված լինի դատարանի դիրքորոշումը նորմատիվ ակտի վիճարկվող դրույթի՝ Սահմանադրությանը հակասելու առնչությամբ, ինչպես նաև այն հանգամանքը, որ այդ գործի լուծումը կարող է իրականացվել միայն վիճարկվող դրույթի կիրառմամբ:

5. Դիմումի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Առաջին աստիճանի դատարանի կողմից վարույթում կասեցրած թիվ ԸԻԴ 2119/02/2014թ. քաղաքացիական գործով հայցի առարկան Պարտապանին պատկանող 2 ավտոմեքենաներն արգելանքից հանելու պահանջն է, ինչը ենթադրում է, որ տվյալ քաղաքացիական գործով դատական քննության առարկա պետք է հանդիսանան ամուսինների ընդհանուր սեփականության հետ կապված իրավահարաբերությունները, որոնք կարգավորվում են ԼՂՀ ընտանեկան օրենսգրքի 26-րդ հոդվածի, ինչպես նաև ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 12-րդ գլխի հոդվածների կանոններով:

Ինչպես նկատելի է, դիմումում բարձրացված հարցը չի խոչընդոտում թիվ ԸԻԴ 2119/02/14թ. քաղաքացիական գործի դատաքննության արդյունքներով ըստ էության դատական որոշում կայացնելուն, քանի որ դիմումում ձևականորեն բարձրացնելով <<Դատական ակտերի հարկադիր կատարման մասին>> ԼՂՀ օրենքի 47.1-րդ հոդվածի 1-ին մասի սահմանադրականության հարց՝ Դիմողն ըստ էության, առաջ է քաշել այդ դրույթի օրինականության և իրավաչափության վերացական խնդիր, որի գնահատումը Գերագույն դատարանի իրավասության մեջ չի մտնում և չի կարող դառնալ սահմանադրական արդարադատության առարկա: Այդ այն դեպքում, երբ տվյալ քաղաքացիական գործով դատական քննության առարկա պետք է հանդիսանան ամուսինների ընդհանուր սեփականության հետ կապված իրավահարաբերությունները, որոնք կարգավորվում են ԼՂՀ ընտանեկան օրենսգրքի 26-րդ հոդվածի, ինչպես նաև ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 12-րդ գլխի նորմերի կանոններով:

6. Գերագույն դատարանը գտնում է նաև, որ ԸԻԴ 2119/02/2014թ. գործով հայցվոր Իննա Պետրոսյանի համար հետագայում առաջանալիք անբարենպաստ պայմանները Պարտապանի նկատմամբ կայացված համապատասխան դատական ակտերի արդյունք են, հետևաբար, խնդրո առարկա դրույթների սահմանադրականությունը վիճարկելով՝ Առաջին աստիճանի դատարանն ընդամենը բարձրացնում է դրանց կիրառման իրավաչափության հարց՝ փորձելով այն քողարկել խնդրո առարկա դրույթների սահմանադրականության վիճարկմամբ:

Վերոշարադրյալի կապակցությամբ ԼՂՀ Գերագույն դատարանն արձանագրում է, որ բոլոր այն դեպքերում, երբ դիմողը ձևականորեն վիճարկելով օրենքի դրույթի սահմանադրականության հարց, ըստ էության բարձրացնում է այդ դրույթի կիրառման իրավաչափության հարց, ապա այդպիսի դիմումը ենթակա է մերժման՝ <<Սահմանադրական դատավարության մասին>> ԼՂՀ օրենքի 20-րդ հոդվածի 1-ին կետի հիմքով՝ որպես ԼՂՀ Գերագույն դատարանի սահմանադրական արդարադատության քննության ենթակա հարց չառաջացնող դիմում, հանդիսանում են գործի քննության ընդունումը մերժելու հիմք:

Ելնելով վերոգրյալներից և ղեկավարվելով <<Սահմանադրական դատավարության մասին>> ԼՂՀ օրենքի 20-րդ հոդվածի 1-ին, 3-րդ կետերով, 59-րդ հոդվածի 5-րդ մասով՝ ԼՂՀ Գերագույն դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

<<Դատական ակտերի հարկադիր կատարման մասին>> ԼՂՀ օրենքի 47.1-րդ հոդվածի 1-ին մասի՝ ԼՂՀ Սահմանադրությանը համապատասխանության վերաբերյալ ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարանի դիմումի քննարկման արդյունքներով գործի քննության ընդունումը մերժել՝ դիմումում առաջադրված հարցը ԼՂՀ Գերագույն դատարանին ենթակա չլինելու պատճառաբանությամբ:

ԳԴԱՌ – 13

20 փետրվարի 2015թ.